# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 10

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԳԱՆՁԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,01192 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԱՐՈՏԱՎԱՅՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն Գ.Գևորգյանը և հայտնել, որ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանձաքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,01192հա մակերեսով հողամասը /վկայական թիվ 21112022-11-0026/ հանդիսանում է գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամաս: Անհրաժեշտություն է առաջացել 0.01921հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական արոտավայրից՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ նշանակության օբյեկտների նպատակային, կապի գործառնական նշանակության, բջջային կապի կայան տեղակայելու համար, փոփոխելուն համաձայնություն ստանալու նպատակով լիազոր մարմին ներկայացնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մարմինների մասին,, օրենքի 18-րդ հոդվածի թիվ 29 և թիվ 31 կետերի պահանջներով.

***Համայնքի ավագանին որոշում է.***

1.Տալ հավանություն՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանձաքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, հանայնքային սեփականություն հանդիսացող 0,01192հա մակերեսով հողամասը /վկայական թիվ 21112022-11-0026/, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության կազմից՝ էներգետիկայի,տրանսպորտի, կապի, կոմունալ նշանակության օբյեկտների նպատակային, կապի գործառնական նշանակության բջջային կապի կայան տեղակայելու համար, փոփոխելուն համաձայնություն ստանալու նպատակով լիազոր մարմին ներկայացնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱԲԵԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ԱՅՎԱԶՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԻԼՅԱՆ ՄԵԴՈՐԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՀԱՄԶՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՂԱՋՈՒՄՅԱՆ ՄԱՆԵ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՃԱՂԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԵՀՐԱԲՅԱՆ ԱՆՈՒՇ

ՉԱՊՈՒԽՅԱՆ ԳԱԳԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ

ՋԱՆՎԵԼՅԱՆ ՆԱԻՐԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԱՐՀԱՏՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՎԱՐՇԱՄՅԱՆ ՎԱՀԵ

ՎԻՐԱԲՅԱՆ ՆԱՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**